ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 61–Ա

2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2015թվականի ապրիլին գյումրեցի ծանրորդ Տիգրան Գևորգի Մարտիրոսյանը Թբիլիսի քաղաքում կայանալիք Եվրոպայի մեծահասակների ծանրամարտի առաջնությունում գրավեց 1-ին տեղը, Կարապետ Չալյանը Լեհաստանում մինչև 23 տարեկան հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի առաջնությունում գրավեց 3–րդ տեղը, իսկ Սերբիայում կայացած սամբոյի երիտասարդների և պատանիների առաջնության ժամանակ սամբիստները նվաճեցին՝ երիտասարդները՝ 2 արծաթե մեդալներ, իսկ պատանիները՝ 1 բրոնզ:

Գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին խրախուսելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ համայնքի **ավագանին որոշում է.**

1. 2015 թվականին Եվրոպայի ծանրամարտի, հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի և սամբոյի առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ դարձած մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) <<Սպորտային պարգևներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

30 ապրիլի 2015թ.
ք.Գյումրի